3 մարտի 2016 թվականի N 261 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1442-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով և «Մննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գյուղատնտեսական կենդանիների, կենդանական ծագում ունեցող հումքի, մթերքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն և 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1442-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ, ՄԹԵՐՔԻ, ԿԵՐԵՐԻ, ԼՐԱՑԱԿԵՐԵՐԻ, ԿԵՐԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ, ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ՇՓՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՄՆՆԴԱՅԻՆ ՈՒ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ» բառերը փոխարինել «ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ

ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱ-ՀԱՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ) ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ» բառերով.

2) որոշման նախաբանը և 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով և «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման, ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) արտահանման կարգը՝ համաձայն հավելվածի:».

3) որոշման հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԱՐԳ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ) ԱՐՏԱՀԱՆՄԱՆ».

4) որոշման հավելվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կարգով կարգավորվում են սննդային արտադրանքի (այսուհետ՝ սննդամթերք) և սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման, ինչպես նաև անասնաբուժական հսկողու-

թյան (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) արտահանման ընթացակարգերը և դրանց իրականացման պայմանների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝ բեռ են համարվում սննդամթերքը, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերը, իսկ սույն կարգի III գլխում՝ նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքները:

5. Բեռը ներմուծվում կամ արտահանվում կամ տարանցիկ փոխադրվում է բեռի տվյալ խմբաքանակի անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթի՝ առողջության սերտիֆիկատի, որակի և անվտանգության կառավարման համակարգի սերտիֆիկատի, անվտանգության սերտիֆիկատի, պետական գրանցման վկայականի կամ համապատասխանության հայտարարագրի կամ բեռի տվյալ խմբաքանակի փորձարկման լաբորատորիայի փորձաքննության արձանագրությունների առկայության դեպքում (այսուհետ՝ բեռն ուղեկցող փաստաթուղթ):».

5) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով.

«9.1. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) անդամ այլ երկրներից ներմուծվող բեռի բացթողումը կամ տեղաշարժի կասեցումը կամ ներմուծման արգելքը կամ վերադարձը ձևակերպվում է հսկիչ կետի պաշտոնատար անձի կողմից ապրանքն ուղեկցող փաստաթղթերի վրա համապատասխան դրոշմակնիք դնելով:».

6) որոշման հավելվածի 12-րդ կետից հանել «(բացառությամբ կենդանիների և սննդամթերքի հետ շփվող նյութերի)», իսկ 16-րդ կետից՝ «(բացառությամբ կենդանիների)» բառերը.

7) որոշման հավելվածի 13-րդ կետից հանել «չեն պահպանվել անասնաբուժության բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանված Հայաստանի Հանրապետության անասնաբուժական-սանիտարական և անասնաբուժական պահանջները կամ արտահանող երկրում անասնահամաճարակային անկայուն իրավիճակի կամ կարանտինային հիվան-

դությունների բռնկման մասին առկա է համապատասխան պաշտոնական տեղեկատվություն, և կան արտահանման սահմանափակումներ, կամ սննդամթերքի և անասնակերի արագ արձագանքման միջազգային համակարգի կողմից ստացվել է հաղորդագրություն, կամ» և «3-րդ և» բառերը.

8) որոշման հավելվածի 20-րդ կետում «Ոչնչացում» մաքսային ռեժիմով» բառերը փոխարինել «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով» բառերով.

9) որոշման հավելվածի 21-րդ կետից հանել «անասնաբուժական պետական հսկողության ենթակա բեռների ներմուծման համար» և «անասնաբուժական սերտիֆիկատ, իսկ» բառերը.

10) որոշման հավելվածի 22-րդ կետում «անասնաբուժական կամ առողջության սերտիֆիկատի կամ անասնաբուժական վկայականի» բառերը փոխարինել «առողջության սերտիֆիկատի, որակի և անվտանգության սերտիֆիկատի, պետական գրանցման վկայականի կամ համապատասխանության հայտարարագրի» բառերով և հանել «անասնաբուժական» բառը.

11) որոշման հավելվածի 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) պարզում է ԵՏՄ անդամ երկրներ փոխադրվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված անասնաբուժական վերահսկողության ենթակա բեռն արտադրողի, վերամշակողի և (կամ) պահպանողի առկայությունը ԵՏՄ կազմակերպությունների ռեեստրում:».

12) որոշման հավելվածի 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«38. Արտահանման արգելման դեպքում բեռի անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթուղթ (սերտիֆիկատ կամ համապատասխանության տեղեկանք) չի տրվում, և բեռն ուղեկցող փաստաթղթի վրա դրվում է «Արտահանումն արգելվում է» դրոշմը:».

13) որոշման հավելվածի ամբողջ տեքստում «սննդամթերքի հետ շփվող» բառերը փոխարինել «սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող» բառերով և հանել «սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների» բառերը.

14) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 3-րդ, 4-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 23-րդ, 24-րդ, 41-րդ և 43-րդ կետերը.

15) որոշման հավելվածի 51-րդ կետից հանել «և անասնակերի» բառերը.

16) որոշման հավելվածի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ապրանքատնտեսագիտական գործունեության դասակարգչի	Ապրանքի անվանումը	Բնաիրային չափը
1	2	3
02	Միս և մսի սննդային ենթամթերք	30 կգ
03	Ձկներ և խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ՝ բացառությամբ կենդանի ձկան	30 կգ
0302 90 000 0	Ձկան խավիար	0.5 կգ
04	Կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերք՝ դասակարգչի այլ տեղում չհիշատակված կամ չներառված	30 կգ
0408 11	Ձվի դեղնուց չորացված	1 կգ
0407	Թռչնի ձու՝ կճեպով, թարմ պահածոյացված կամ եփած	150հատ
08	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի ու սեխի կեղևներ և կճեպներ	50 կգ յուրաքանչյուր տեսակից
09	Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ	5 կգ
1201	Սոյայի պտուղներ՝ մանրատած կամ չմանրատած	20 կգ

1202	Գետնընկույզ՝ չբռված կամ որևէ այլ եղանակով չպատրաստած, կեղևահանած կամ կեղևով, մանրատած կամ չմանրատած՝	20 կգ
1203 00 000 1204 00 1205 1208	Կոպրա, վուշի, հլածուկի կամ կոլզայի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած, մանր և խոշոր աղացվածքի ալյուր՝ ստացված յուղատու մշակաբույսերի սերմերից կամ պտուղներից՝ բացի մանանեխի սերմերից	20 կգ
1207	Այլ յուղատու մշակաբույսերի սերմեր ու պտուղներ՝ մանրատած կամ չմանրատած՝	50 կգ
1206 00	Արևածաղկի սերմեր՝ մանրատած կամ չմանրատած՝	50 կգ
1212	Ծովային և այլ ջրիմուռներ, շաքարի ճակնդեղ և շաքարեղեգ՝ թարմ սառեցված, պաղեցված կամ չորացված, կոտորակված կամ չկոտորակված, պտուղների կորիզներ և դրանց միջուկներ, սննդի նպատակով օգտագործվող բուսական ծագման այլ մթերք՝ դասակարգչի այլ տեղերում չհիշատակված կամ չներառված	20 կգ
15	Կենդանական կամ բուսական ծագման ճարպեր և յուղեր, դրանց ճեղքումից ստացված նյութեր, պատրաստի սննդայուղեր, բուսական կամ կենդանական ծագման մոմեր՝ բացառությամբ գերչակի	25 կգ
16	Պատրաստի մթերք մսից, ձկից կամ խեցգետնակերպերից, կակղամորթերից կամ ջրային այլ անողնաշարավորներից	20 կգ
1604 31 000 1604 32 00	Թառափազգիների խավիար և դրա փոխարինիչներ՝ պատրաստված այլ ձկան խավիարից	0.25 կգ
17	Շաքար, այլ շաքարներ՝ ներառյալ լակտոզա, ֆրուկտոզա, մալթոզա, գլյուկոզա, պինդ վիճակում, շաքարային սիրոպներ՝ առանց համահոտային և ներկանյութերի, արհեստական մեղր՝ խառնված կամ չխառնված բնական մեղրի հետ, մելասա շաքարից պատրաստված կակաո չպարունակող հրուշակեղեն՝ ներառյալ սպիտակ շոկոլադը	10 կգ

1704 10	Մաստակ՝ պատված կամ չպատված շաքարով	1 կգ
18	Կակաո և դրանից մթերք	10 կգ
19	Պատրաստի մթերք հացահատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, հրուշակեղենի արտադրանք ալյուրից	15 կգ
1901 10 000 0	Մանկական կեր՝ փաթեթավորված վաճառքի համար	15 կգ
1901 20 000 0	Հացաբուլկեղենի և ալրային հրուշակեղենի պատրաստման համար խառնուրդ և խմոր	15 կգ
1902	Մակարոնային արտադրանք, ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված, խորիզով (մսից կամ այլ մթերքներից) կամ առանց խորիզի կամ պատրաստված այլ եղանակով, ինչպիսիք են սպագետին, մակարոնը, լափշան, կոտոշիկները, ռավիոլին, կաննելլոնին, կուսկուսը՝ սննդի մեջ օգտագործման համար պատրաստի կամ ոչ պատրաստի վիճակում	10 կգ
1904	Պատրաստի սննդամթերք՝ ստացված հացաբույսերի հատիկների կամ հացահատիկային մթերքների փքեցմամբ կամ բովմամբ (օրինակ՝ եգիպտացորենի փաթիլները), հատիկաբույսեր՝ հատիկի կամ փաթիլների տեսքով (բացի եգիպտացորենի հատիկից)՝ այլ եղանակով մշակված (բացառությամբ մանր և խոշոր աղացած ալյուրի, ձավարի) նախապես խաշված կամ այլ եղանակով պատրաստված, այլ տեղում չհիշատակված կամ չներառված	5 կգ
1905 31 1905 32	Քաղցր չոր թխվածքաբլիթ, վաֆլի և վաֆլու շերտեր	5 կգ
20	Մթերք՝ ստացված բանջարեղենի, մրգերի, ընկույզների, սնկի կամ բույսերի այլ մասերի վերամշակումից	10 կգ
21	Սննդամթերքներ՝ տարբեր	5 կգ
2102	Խմորիչ (ակտիվ կամ ոչ ակտիվ), այլ մեռած միաբջիջ օրգանիզմներ,	2 կգ

	պատրաստի թխման փոշի	
22	Ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ	2 լիտր կամ 1 շիշ, եթե 1 շշի տարողությունը 2 լիտրից ավելի է
23	Մսնդարդյունաբերության մնացորդներ և թափոններ	5 կգ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 18
Երևան